



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ
ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԹՈՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ
ԵԿԵՂԵՑՈՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ

ԺԱՄԱՆՈՒՄ

Մեր հաւատոյ հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի տօնին առիթով, Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ծխական համայնքը Մարտ 28-29 շաբաթավերջին ապրեցաւ տօնական մթնոլորտ, վայելելով Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի այցելութիւնն ու եպիսկոպոսական Ս. Պատարագը: Արդարեւ, այդ օրը նաեւ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնն էր:

Առաջնորդ Սրբազանը Սան Ֆրանսիսքօ հասաւ Շաբաթ, 28 Մարտի յետմիջօրէին, ընկերակցութեամբ Հոգեշնորհ Տ. Պարթեւ Կրդ. Կիլիւմեանի: Անոնք օղակայանին մէջ դիմաւորուեցան շրջանիս Հոգեւոր Հովիւին՝ Արժ. Տ. Աւետիս Քիւյ. Թորոսեանի եւ հոգաբարձութեան ատենապետ Տիար Վարանդ Գասպարեանի կողմէ, ապա ուղղուեցան «Մերիըթ» պանդոկ: Սան Ֆրանսիսքօ ժամանած էին նաեւ Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան եւ անդամներէն Տիար Ներսես Մելքոնեան, տօնական ուրախութեան մասնակցելու համար:

Ողջոյնի ու բարի գալստեան մաղթանքներէն ետք, Առաջնորդ Սրբազանը, ընկերակցութեամբ հոգեւորականներուն եւ հոգաբարձութեան ատենապետին, այցելեց համանքի յարգարժան երկու ընտանիքներու, որոնք սուգի ու անհանգստութեան պատճառով դժուար օրեր կ'անցնէին: Սրբազան Հօր սիրալիր խօսակցութիւնն ու աղօթքը սփոփեցին ու մխիթարեցին զանոնք:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Երեկոյեան ժամը 6:30ին, գաղութիս Հայ Դատի հիւրասենեակին մէջ, խորհրդակցական հանդիպում մը տեղի ունցաւ Առաջնորդ Սրբազան Հօր, Ազգ. Վարչութեան անդամներուն ու ծխական շրջանի ժողովականութեան միջեւ: Արժարժուեցան ծխական համայնքը յուզող եկեղեցական, կրթական

ու ընդհանրական հարցեր: Դժուարությունները հալածական ճիգով ու գործակցաբար դիմագրավելու կարելիությունը անհրաժեշտ նկատուեցաւ:

Առաջնորդ Սրբազանը նաեւ մտերմիկ հանդիպում մը ունեցաւ Զ.Ե.Դ.ի Ռոստոմ ուխտի պատանիներուն հետ, տեղւոյն ակումբին մէջ, եւ իրենց փոխանցեց կարճ պատգամ մը, շեշտելով պարկեշտութեամբ ու միասնաբար գործելու սկզբունքները: Առաջնորդ Սրբազանը վեր առաւ երիտասարդութեան կարելիությունը մեր հալածական կեանքին մէջ, ու կոչ ուղղեց ներկաներուն, որ գործօն մասնակցութիւն ունենան հայ կեանքին մէջ: Առաջնորդ Սրբազանին հրաւերին վրայ, Հայր Պարթեւ իր կարգին դաստիարակչական պատմութիւն մը պատմելով՝ խրախուսեց երիտասարդները, մասնակից դառնալու եկեղեցական ու ազգային կեանքին, դիտել տալով որ «Հայ երիտասարդութիւնը ոչ միայն մեր Ազգին ապագան է, այլ նաեւ ներկան», մեջբերելով Վեհափառ Հօր խօսքը: Հանդիպումը աւարտեցաւ Սրբազան Հօր «Պահպանիչով» եւ «Մեր Հայրենիք»: քայլերգով:

Այս հանդիպումէն ետք, ներկաները անցան «Վասպուրական» սրահ, եւ սիրոյ սեղանի շուրջ ընթերցին. հիւրասիրութիւնը պատրաստած էին եկեղեցւոյ Տիկնանց Միութեան անդամները: Ընթրիքի պահուն, յաջորդաբար խօսք առին Հոգեւոր Հովիւը, Ազգային Վարչութեան ատենապետը, Հոգաբարձութեան ատենապետը եւ Առաջնորդ Սրբազան Հայրը: Սրբազան Հայրը իր խօսքին մէջ շեշտեց համագործակցութեան կարելիությունը եւ ըսաւ որ այդ ձեւով կարելի է նուաճել ներկայի ու ապագայի դժուարությունները:

Ս. ՊԱՏԱՐԱԳ, ԶԵՆԱԴԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՀՆԷՔ

Կիրակի, 29 Մարտ 2009ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առթիւ, Սուրբ եւ անմահ Պատարագ մատուցանեց եւ յաւուր պատշաճի իր պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազանը: Յընթացս Ս. Պատարագի, Առաջնորդ Սրբազանը եկեղեցւոյ ծառայողներէն 13 հոգիներու դպիրութեան աստիճան, իսկ 8 դպիրներու ուրար կրելու իրաւունք շնորհեց:

Սրբազան Հայրը ողջունեց հաւատացեալ ժողովուրդը եւ համայնքի կազմակերպութեանց ներկայացուցիչները, ապա նշեց թէ անցեալ տարի նոյն այս շրջանին, Վեհափառ Հայրապետին հրաւերին ընդառաջելով, ներկայ գտնուած էր Անթիլիաս, Մայրավանքի ուխտի օրուան առթիւ Ս. Պատարագ մատուցած էր ու վկան եղած՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջին հանդէպ մեր ժողովուրդին հաւատքին ու երկիւղածութեան: «Լուսաւորիչի Աջը աշխարհատարած մեր ժողովուրդին օրհնութիւն ու բարիք կը բաշխէ, ֆիզիքական ու հոգեկան բժշկութիւն կը պարգեւէ», ըսաւ Առաջնորդ Սրբազանը, աւելցնելով, որ Անթիլիասի Մայր Տաճարի կամարներուն տակ աղօթքի պահուն, յիշած է մեր Թեմի ժողովուրդն ու Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ծխական համայնքը:

Սրբազան Հայրը ամփոփ կերպով անդրադարձաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայրապետի կեանքին եւ յատկապէս վասն քրիստոնէութեան անոր կրած չարչարանքներուն. «Բազմաչարչար մեծ սուրբը ճգնեցաւ,

տառապեցաւ ու իր հաւատքին շնորհիւ արժանացաւ մեր հոգիներուն լուսաւորիչը ըլլալու շնորհքին», շարունակեց Առաջնորդ Սրբազանը, կոչ ուղղելով ներկաներուն, որ խնդրեն Սուրբին բարեխօսութիւնը մեր ազգային ու հաւաքական կեանքի բարգաւաճման համար:

Շարունակելով իր պատգամը, Առաջնորդ Սրբազանը կանգ առաւ այն իրողութեան վրայ, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ուխտի այս օրը կը զուգահիսի մեծ պահոց վեցերորդ Կիրակիին: «Այսօր ուխտի օր է, այսօր աղօթքի օր է, վերանորոգութեան ու նուիրումի օր: Այսօր մեր մեծ սուրբին բարեխօսութեամբ հոգիները մաքրելու օր է, անկեղծ հաւատքով ու աստուածգիտութեամբ լոյսի դարձի օր. մեր ծառայական կեանքը պետք է յառաջ տանինք պարկեշտութեամբ ու անաչառ գործով, հեռու՝ փարիսեցիական մօտեցումէ: Եկեք ուրեմն, խոստովանինք, որ ամէն բանէ աւելի սրտով, հոգով, միտքով ու ողջ էութեամբ զԱստուած կը սիրենք, նոյն սիրով ալ իրարու հանդէպ պիտի տրամադրուինք՝ վասն պայծառութեան մեր եկեղեցւոյ ու շինութեան ազգիս», շեշտեց Առաջնորդ Սրբազանը:

Ս. Պատարագի աւարտին, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Թեմիս անդրանիկ Առաջնորդին՝ Գերշ. Տ. Զրանդ Արք. Խաչատուրեանի, նախկին հովիւներէն Տ. Խաչիկ Քհնյ. Գռուզեանի, Տ. Մովսէս Քհնյ. Շիրիքեանի, Տ. Սահակ Քհնյ. Պալեանի, եկեղեցւոյ ննջեցեալ նուիրեալներուն եւ յայտնի ու անանուն բարերարներու հոգիներուն խաղաղութեան համար:

Հոգեհանգիստի աւարտին, «Գթա՛ Տեր»ի երգեցողութեամբ, Առաջնորդ Սրբազանն ու երգեցիկ դասը թափօրով ուղղուեցան եկեղեցւոյ մայր մուտքի շրջափակը, ուր տեղի ունեցաւ ավանդական մատաղի օրհնութիւն: Աւարտին՝ ժողովուրդի հոծ բազմութիւնը երգեց »Կիլիկիա«-ն եւ Զայաստանի քայլերգը:

ՍԻՐՈՅ ԾԱՇ

Նոյն օրը, յետմիջօրէին ժամը 2:30ին, Առաջնորդ Սրբազան Զայրը ուղղուեցաւ Խաչատուրեան Զայ Կեդրոնի «Սարոյեան» սրահը, ուր ի պատիւ իրեն եւ ընկերակից հիւրերուն կազմակերպուած էր ճաշկերոյթ մը եկեղեցասէր Տիկնանց միութեան կողմէ, հովանաւորութեամբ՝ Տեր եւ Տիկին Գրիգոր եւ Սեդա Գիգիրեաններուն:

Բացման խօսքը կատարեց Հոգաբարձութեան ատենապետը: Ան բարի գալուստ մաղթեց Առաջնորդ Սրբազանին, Ազգային Վարչութեան ատենապետին՝ Տոքթ. Կարօ Յակոբեանի, եւ անդամ Տիար Ներսէս Մելքոնեանի: Ան դրուատեց Սրբազան Զօր ցարդ կատարած իրագործումները եւ մաղթեց, որ նմանօրինակ հովուական այցելութիւններ յաճախակի ըլլան: Գեղարուեստական յայտագիրին մասնակցութիւն բերին Գ.Զ.Վ. Ազգ. Վարժարանի շրջանաւարտներէն՝ Նանօր Տէմիրճեան (ասմունք) եւ հանրածանօթ «Մազմանեան» քառեակը (դասական ու ժողովրդական գործերու կատարողութեամբ), որ ջերմ խանդավառութիւն ստեղծեց ներկաներուն մէջ:

Աւարտին, Առաջնորդ Սրբազանը, խօսք առնելով, բարձր գնահատեց գաղութի պատկան մարմիններու տարած կամաւոր աշխատանքները,

յատկապէս հոգաբարձութեան նախաձեռնած այս գեղեցիկ համախմբումը. Սրբազան Յայրը շնորհաւորեց Յոգեւոր Յովիւր, Եկեղեցւոյ անուանակոչութեան առթիւ եւ թելադրեց որ վերանորոգուած ուժով եւ թափով շարունակէ իր առաքելութիւնը, գործակցելով հոգաբարձութեան հետ:

Անդրադառնալով տօնական օրուան խորհուրդին, Առաջնորդ Սրբազանը նշեց, որ Լուսաւորիչ Յայրապետը հոգեփոխութեան ենթարկեց Յայ ազգը, ու այս տօնը կոչուած է հոգեփոխութեան ենթարկելու նաեւ մեզ: Լուսաւորիչ Յայրապետը նաեւ հայութեան տուաւ մշակութային ինքնուրոյնութիւն, ու մենք կոչուած ենք հարազատ մնալու մեր ինքնուրոյն մշակոյթին ու անկողութիւններուն: Ս. Գրիգոր Լուսաւորիչ նաեւ մարմնացում էր գոհողութեան ու յանձնառութեան, նոյն ոգիով ալ մենք պարտաւոր ենք յանձն առնել մեր պարտականութիւններն ու պատասխանատուութիւնները, ընդգծեց Առաջնորդ Սրբազանը, որ այս առիթով նաեւ դրուատական արտայայտութիւններով անդրադարձաւ Սան Ֆրանսիսքոյի մեր գաղութին մասին ու մաղթեց բարգաւաճում:

Ճաշկերոյթը վերջ գտաւ «Պահպանիչ»ով, որմէ ետք Առաջնորդ Սրբազանը մտերմիկ գրոյց ունեցաւ զինք շրջապատող հաւատացեալներուն հետ:

Առաջնորդ Սրբազանը Լոս Անճելըս վերադարձաւ երեկոյեան:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ գրասենեակ
Սան Ֆրանսիսքո, Քալիֆորնիա

PRELATE'S VISIT TO THE ST. GREGORY PARISH IN SAN FRANCISCO

In celebration of the Feast of St. Gregory the Illuminator's Descent into the Pit and the name day of St. Gregory Church, on March 28th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian paid a visit to the San Francisco parish community.

The Prelate, accompanied by Very Rev. Fr. Barthev Gulumian, arrived in San Francisco on Saturday the 28th where they were welcomed by parish pastor Rev. Fr. Avedis Torossian and Board of Trustees Chairman Mr. Varant Kasparian. Executive Council Chair Dr. Garo Agopian and member Mr. Nerses Melkonian were also in San Francisco to join in the festivities.

Upon his arrival the Prelate, accompanied by the clergy and Board Chairman, visited two families who were coping with grief and illness and offered his prayers and consolation.

In the evening, the Prelate and council members met with the Board and Delegates of the Church for a discussion on issues concerning the parish community.

Later on the Prelate addressed members of the AYP Rosdom Chapter. The Prelate spoke to them of the importance of youth participation in our collective endeavors, urging them to engage in community life. Upon the

invitation of the Prelate, Very Rev. Fr. Barthev Gulumian conveyed his well wishes to the youth and, reiterating the Prelate's remarks, encouraged them to take an active role in our church and community life.

The gathering came to a close with the Prelate's benediction and the collective singing of the Armenian national anthem.

A reception organized by the Ladies Auxiliary followed at "Vasbouragan" Hall during which remarks were delivered by the Pastor, Executive Council Chair, and Board of Trustees Chair. The Prelate, in his message, stressed the importance of collaboration within the community for the overcoming of difficulties and the advancement of the parish and the community in general.

On Sunday, March 29th, the name day of the Church, the Prelate celebrated Divine Liturgy, delivered the sermon, ordained 13 acolytes and elevated 8 acolytes to the rank of stole bearer.

Prior to delivering his sermon the Prelate welcomed the parishioners and community representatives, noting that last year this time, upon the invitation of H.H. Catholicos Aram I, he celebrated Divine Liturgy at St. Gregory the Illuminator Cathedral in Antelias where he witnessed first hand the reverence of the faithful towards the relic of St. Gregory's right hand. The Prelate also noted that he offered special prayers for the Prelacy faithful and specifically the parish community of St. Gregory Church on that occasion.

The Prelate centered his sermon on the virtuous life and example of St. Gregory and the torture he endured for his Christian faith, urging the faithful to pray for his intercession for the splendor of our church and nation. The Prelate stressed that this occasion is a day of prayer, a day of renewal, an opportunity to cleanse our souls and continue our service with integrity. "Let us vow to, above all else, love the Lord with all our hearts, souls, and strength, and love each other for the benefit of our church and people", concluded the Prelate.

During requiem service, prayers were offered for the first Prelate of the North American Prelacy H.E. Archbishop Hrant Khatchadourian, former pastors Rev. Fathers Khatchig Krouzian, Movses Shirikian, and Sahag Balian, and departed servants and sponsors.

At the conclusion of services the Prelate was led in a procession to the main entrance of the church where he blessed the *madagh*.

In the afternoon, the Prelate presided over the banquet at "Saroyan" Hall of the Khachaturian Armenian Center.

Welcoming remarks were delivered by the Board of Trustees Chairman. KVZ School students and the renowned "Mazmanian Quartet" participated in the artistic program.

Concluding remarks were delivered by the Prelate. The Prelate highly commended the work carried out by the various community organizations and congratulated the parish on their name day celebration, encouraging them to continue their mission with renewed strength and devotion.

Reflecting on the message of the Feast of St. Gregory, the Prelate stated that St. Gregory brought about a spiritual change in the Armenian people, gave uniqueness to our culture, and was the embodiment of sacrifice and devotion. In commemoration of his feast day, the Prelate concluded that we are called

upon to undergo a spiritual change, to remain true to our culture and heritage, and to fulfill our responsibilities and obligations in his example.

The banquet came to a close with the benediction after which the Prelate conversed with the guests, who expressed their joy for the wonderful weekend.